

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՏԱՆ

(1907 - 1947)

Սրտամկի ու հարուածող ցաւ մը ցնցեց մեր հոգիները անցնող տարւոյն վերջին երկու շաբաթներուն՝ անակնկալ մահովը Գուրգէն Ալեմազի: Ան կորովի ու թարմ երիտասարդութեան մէջ ինկաւ իր գեղաբուստական ասպարէզի արշալոյսին, երբ հայ մամուլը տակաւին կը զբաղէր իր արուեստով, իր տաղանդին փայլուն կողմերով և ապագայի յուսադրական տեսիլներով:

Բոթը կը հասնէր Տիթրոյթէն (Ամերիկա): Այս ամառ թողած Փարիզ, իր մօրը հետ մեկնած էր Ամերիկա իր մօրեղբոր այցելութեան, միանգամայն տալու մէկ քանի նուագաչանդէսներ հայկական նշանաւոր երգահաններու և իր ստեղծագործած կտորներով: Այնքան խանդավառօրէն ընդունուած հոն, ծափահարուած, սիրուած և լայն համակրութիւն ստեղծելէ վերջ իր տաղանդին և իր անձին շուրջ, յանկարծ Գեկտեմբեր 14-ին առաւօտը սրտի կաթուածէ մը կ'իյնար այլեւս չկանգնելու համար:

Անփոփելի կորուստ, անդամանելի բաց մը կը թողու Գուրգէն Ալեմազ իր ետին: Իր տաղանդը հմայած էր զամէնքը, իր ազնուական հոգին գրաւած էր իր բոլոր բարեկամներու և ծանօթներուն սիրտը, այնպէս որ իր անդարձ մեկնումը յուսալքիչ ու վրդովող ազդեցութիւն ըրաւ առհասարակ բոլորին վրայ: Ո՛րքան ծրագիրներ, ո՛րքան գեղեցիկ գաղափարներ, ո՛րքան յուզումներ և զգայնութիւններ մեռան իրեն հետ: Ի՛նչ քան յոյսեր իր դաստիարակ Հայրերուն և ինչքան երաժշտական նոր գործերու փափաքներ թաղուեցան իրեն հետ:

Իր սգաւոր մօր Տիկ. Սիրանոյշին և իր անձկալի եղբայրներուն Պր. Խաչիկի և Պր. Կարպիսի հետ անբաժան Մխիթարեան Հայ-

րերը Ս. Ղազարու, Վենետիկ Մ. Ռաֆայէլեան և Սեւրի Մուրատեան վարժարանները համակուած են խոր սուգի մէջ, ինչպէս բոլոր մտերիմ բարեկամները և ազգայինները:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Գուրգէն Ալեմազ, ծնած էր Նիկոմիդիա 1907-ին: Նախակրթարանի ուսումները կատարելէ վերջ Բերայի Մխիթարեանց Գալուցը, 1919-ի Հոկտ.ին կ'անցնէր Վենետիկի Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը, ամբողջացնելու համար իր ուսումները, իր տոհմային զարգացումը Մխիթարեանց շունչին տակ: Վենետիկի պէս գեղարուեստական քաղաքի միջավայրը, ուր գեղարուեստի բոլոր ճիւղերը իրենց գլուխ գործոցները ունին, ուր երաժշտութիւն է նոյնիսկ կեանքը որ կ'անցնի՝ լճակի ծփփուն ալեակներուն պէս թեթեւ ու հեղաճկուն, ուր ամառները սեռնաւորներով կը ճխայ ու կը խայտայ եթե՛րային ներդաշնակութեամբ մը, հոն Գուրգէն զգացած է այդ չնաշխարհիկ քաղաքին բովանդակ բանաստեղծութիւնը: Վենետիկի մէջ արգէն, ըլլայ Մ. Ռ. վարժարանի յարկին տակ՝ ուր երաժշտութեան յատուկ պաշտամունք կայ, ըլլայ քաղաքին թատրոններուն և նուագաչանդէսներուն մէջ, և մանաւանդ Ս. Մարկոսի հրապարակին վրայ՝ որ ամառները երաժշտական հնչուն ու գրաւիչ Սրահի մը կը փոխուի, Գուրգէն Ալեմազ մեծ վարպետներու, մեծ երգահաններու հետ մերձաւոր շփման ու հաղորդակցութեան մէջ եղած է, իր պատանի զգայուն հոգւոյն վրայ կրելով անոնց խոր տպաւորութիւնները:

Ուսումնասէր ու ժրջան աշակերտ՝ Գուր-

գէն կանոնաւոր կերպով հետեւած է վարժարանի բոլոր նիւթերուն ու յաջողութեամբ աւարտած (լիկեոնական) ընթացքը 1923-ին Հ. Գարրիէլ վրդ. Նահապետեանի տեսչութեան օրով:

Անոր Գաշնամուրի ուսուցիչ եղած է Փրօֆ. Ճիարտա: Ազգային տօներու, ամառվերջի հանդէսներու առթիւ, երբ Վարժարանի Թիէփոլեան դահլիճին մէջ կը տրուէին նուագաչանդէսներ Աւրելիանոյ Փոնձիլաքուա Մայեսթրոյի ղեկարութեամբ, Գուրգէն Ալեմազ իր գաշնամուրի ընկերակցութեամբ զարդն էր այդ գեղեցիկ հանդէսներուն:

1923-ին անցնելով Միլան, կը մտնէ Պետական Երաժշտանոցը, ուր կ'ունենայ իրբեւ ուսուցիչ ժամանակին նշանաւոր վարպետներէն՝ Փիծծէթթի, Բոսսի, Փարիպէնի: Երաժշտանոցի ուսուցիչները արտայայտուած են իր մասին միշտ գնահատական բառերով, տեսնելով իրենց արեւելքցի աշակերտին մէջ բացառիկ կարողութիւն, ներշնչումի եզակիութիւն և նիւթը ընդլայնելու անսովոր յատկութիւն, որ գիտէ խառնել եւրոպական քերթիքին արեւելեան վառվառն երեւակայութեան տուեալները և ժողովրդական մօթիքները: Եթե՛ր տարի տեւող այս ընթացքը մեծ յաջողութեամբ աւարտելով կը ստանար Երգանանի վիպաւիան:

Իր երաժշտական գործունէութեան համար իւրեւ լաւագոյն միջավայր՝ կ'ընտրէ Փարիզ, ուրտեղի հայկական գաղութն ու ազգային կեանքը կը հրապուրէին զինքը: Կը կազմակերպէ հոն Կիլիկիա երգչախումբը որ քիչ ատենուան մէջ Փարիզի ամէնէն փնտռուած և սիրելի խումբը կ'ըլլայ, տալով ազգային և նաեւ օտար հանդէսներու առթիւ շատ հաճելի համերգներ: Պատերազմի շրջանին կազմակերպած է յաջորդաբար Սիփակ-Կոմիտաս երգչախումբը, որուն բոլոր անդամները սիրով և խանդավառութեամբ կապուած էին իրեն:

Փարիզի մէջ միաժամանակ կը նշանակուի

Երաժշտութեան և Գաշնամուրի Ուսուցիչ Սեւրի Մուրատեան վարժարանին մէջ, ստեղծելով իր շուրջ խանդավառութիւն ու սէր: Տեսչութիւնը համակրանքով կը դիտէր իր այնքան օգտակար գործունէութիւնը որ սակայն շատ կարճատեւ եղաւ:

1934-ին Յունիս 2ի իրիկունը Սալ Կաւոյի մէջ կու տայ շատ հետաքրքրական համերգ մը՝ ուր հազարէ աւելի ազգայիներ, և Ֆրանսացի ու Իտալացի երաժշտագէտներ կը ծափահարեն իր կտորները. այդ առթիւ առաջին անգամ ըլլալով կը նուագուէին իր Արեւելեան գիշերները, և Սալապի պատեւ յազմը՝ ուրիշ փոքր կտորներու հետ. (այս մասին տես «Բազմավէպ» 1934, թիւ 5-6):

Նուագաչանդէսներ տուած է յաջորդաբար Գահիրէ, Ալեքսանդրիա, Սիւրիա, և Լիբանան մեծ յաջողութիւններով: Միջազգային այս երկրորդ պատերազմէն վերջ՝ նախ Մարսիլիա, և յետոյ Ամերիկա, ուր միակ նուագաչանդէս մը կը ցաւ տալ Նիւ Եորքի Թատըն Հօլի մէջ Հոկտ. 3-ին, երբ վրայ հասաւ յանկարծական մահը:

1936-ին երբ Վենետիկի մէջ Մ. Ռ. վարժարանի հարիւրամեայ յորելեանը կը տօնուէր, Գուրգէն Ալեմազ փութաց իր երգչախումբով բերել իր մասնակցութիւնը թէ՛ Մ. Ռաֆայէլեանի դահլիճին մէջ և թէ՛ Ս. Մարկոսի հրապարակին վրայ, ուր նուագուեցաւ իր Հեքիաթը համերգային պոէմա-ն և իր գաշնամուրած բազմաձայն հայ ժողովրդական երգերը Կոմիտասեան երգերու հետ:

Հասան տխուր ժամանակները. 1939 համաշխարհային պատերազմը վրդովեց Ալեմազ ընտանիքն ալ. Մուրատեան վարժարանը փակուեցաւ. Գուրգէն կորսնցուց իր այնքան սիրելի հայրը Միքայէլ Ալեմազ, ու այդ մեծ ցաւը կ'ընկճէր իր հոգին:

Ամէն գնահատանքէ վեր կը մնայ ստուգիւ այդ շրջանին՝ Գուրգէն Ալեմազի իր Կարպիս եղբոր հետ միասին ըրած ծառայութիւնը Սեւրի Մուրատեան վարժարանի պահպանման գործին մէջ: Երբեք պիտի

Հմուտները այն անձնուէր ջանքերն ու զոհողութիւնները՝ զոր կատարեցին անոնք յանուն ազգասիրութեան և յանուն Մխիթարեան Միաբանութեան հանգէպ տաժած իրենց սիրոյն, դուրգուրալով մեր այդ կըրթարանին վրայ, ինչպէս զերգնահատելի պիտի մնան իրենց ճիգերը անոր վերաբացման համար, որ տեղի ունեցաւ 1946-ի Հոկտեմբերին:

Գուրգէն Ալէմշահի յիշատակը միշտ անմոռաց պիտի մնայ Մուրատեան վարժարանի մէջ, ու իր հոգին հեղահայեաց ու բարի՝ պիտի սաւառնի անոր երկնքին վերեւ:

ԳՈՐԾԵՐԸ

Գուրգէն երգահան՝ շատ կարճ ժամանակ ունեցաւ իր տաղանդին արտադրական բու վանդակ կորովը մեղի ցոյց տալու: Ան սկսած էր պարզապէս յայտնել իր կարողութեան մէկ երեսը միայն. արտադրածները կարելի է անուանել իր նախափորձերը:

Իր գործերը կը բաժնենք երկու խումբի. երգեր և Համանշագներ:

ԵՐԳԵՐԸ

Հրատարակած է վեց երգ գաշնակի ընկերակցութեամբ

- ա) Իմ երգը (խօսք՝ Յ. Թումանեանի)
- բ) Ես սիրեցի (խօսք՝ Վ. Թէքէեանի)
- գ) Իմ ետը (խօսք՝ Ա. Չալըքի)
- դ) Աղուորներուն (խօսք՝ Ն. Պէշկեթաշեանի)
- ե) Ծաղիկ էի (խօսք՝ Ա. Խաչակեանի)
- զ) Բուխուրիկ (խօսք՝ Հ. Վ. Յովհաննէսեանի):

Ինչ ՄԵՆԵՐԳ գաշնակի ընկերակցութեամբ. Տետր Ա. Փարիզ 1947:

Այս Տետրին մէջ ամփոփած է վերի վեց երգերն զուրս, որոնց առաջին տպագրութիւնը սպառած էր, նաեւ ուրիշ երեք մեներգներ, Նազեր (ժողովրդական բանաստեղծութիւն), Իդա (խօսք՝ Ա. Չալանեանի), Սիրելիս (խօսք՝ Ա. Խաչակեանի):



† Գ. Մ. ԱԼԷՍՇԱՆ



Մ. Ռափայէլեան վարժարանի հարիւրամեակին առթիւ լուսանկարուած 1936-ին, իր «Կիլիկիա» երգչախումբին հետ՝ Ազոլոյի քաղաքային թատրոնին մէջ:

ՀԻՆԳ ԽՄԲԵՐԳ. Տետր Բ, Փարիզ 1947

- ա) Հայաստան (խօսք՝ Հ. Վ. Յովհաննէսեանի)
- բ) Անուշիկ ետր ջան (խօսք՝ Էլէն Բիւզանդի)
- գ) Մեր պարտիզում (խօսք՝ Էլէն Բիւզանդի)
- դ) Հունձք (խօսք՝ Դանիէլ Վարուժանի)
- ե) Պապուշն Աւարայրի (խօսք՝ Հ. Աւելանի):

ՀԱՄԱՆՈՒԱԳՆԵՐ

Այս կարգին կը պատկանին իր գործիական մեծ ու փոքր սեկթօնիք գործերը,

1. Երկու պատմուածք հազար ու մէկ գիշերներէն
2. Վարդավառը
3. Հայ ժողովրդական պարեր, համանուագում իրմէ Կոմիտաս Վ.ի ժողովրդական պարերու առաջին առնելով ներշնչումը. պահելով անոնց արեւելեան գոյնը՝ ներկայացուցած է զանոնք եւրոպական արուեստով:
4. Հեքիաթը (Հրատ. Փրանս. խորագրով Légende poème symphonique)
5. Արեւելեան գիշերներ
6. Աւարայրի պատերազմը:

Այս վերջին գործը հեղինակին գլուխ գործոցը կարելի է համարել, ուր ան շատ մեծ յաջողութեամբ կը պատկերացնէ Աւարայրի ճակատամարտը իր նախապատրաստական շրջանին, իր ահաւոր պայթումին, տխուր ու խորհրդաւոր վերջաւորութեան մէջ: Ամերիկա տուած նուագազանդէսներուն առթիւ ալ, այս կտորը արժանացած է ամէնէն բոլորն ծափահարութիւններու:

ՄԱՐԴԸ ԵՒ ԵՐԱԺԻՇՏԸ

Ընկերական, ազնիւ ու հաղորդական, հոգւով վեհանձն և զգացումներով ազնուական՝ Գուրգէն Ալեմյազ սիրուած դէմք մ'էր փարիզահայ գաղութին մէջ և մեծապէս գնահատուած իր երգաչանի և խմբավարի արտակարգ ձիրքերով: Զկար մէկը, որ ան-

գամ մը ճանչնար զինքը ու չսիրէր. այնքան համակրելի էր ու գրաւիչ իր ընկերութիւնը: Երգչախումբի բոլոր անդամները իրեն հետ անկեղծ հոգիով կապուած էին, ու պատրաստ միշտ իր ամէն ակնարկին. անոնց վարիչն էր ու միանգամայն մտերիմ ընկերը, որ կը մտահոգուէր իւրաքանչիւրին կարիքով, առողջութեամբ:

Գուրգէն Ալեմյազ որպէս երաժշտագէտ՝ հարկ է ըսել թէ մեր ներկայ երաժշտութեան նուիրուած երիտասարդ սերունդին մէջ ամէնէն աւելի մշակուած ու պատրաստուած միտքերէն մէկն էր: Աւարտելով ամէնէն խստապահանջ Երաժշտանոցի մը, ինչպէս է Միլանու երաժշտանոցին ընթացքը ան ունէր արդէն իր վրայ գրաւականը լաւագոյն ապագայի մը: Արտագրած գործերուն մէջ կը զգացուի եւրոպական արուեստի նրբութիւնը և քերթիքը, որուն կատարեալ տիրապետութիւնն ունէր: Ազգային զգացումը շատ զօրաւոր ըլլալով իր մէջ, աշակերտութեան ընթացքին իսկ կը խանդավառուէր Կոմիտաս վարդապետի ժողովրդական եղանակներու բերած նորութեան առջեւ, ու ուսուցչապետներու մէջ կ'արթնցնէր լայն հետաքրքրութիւն մը հայկական երաժշտութեան ինքնատիպ գեղեցկութիւններուն համար:

Տարուած այս զգացումէն ու սէրէն դէպի հայկական ու արեւելեան երաժշտութիւնը, ծրագրած էր երաժշտանոցին մէջ արդէն նուիրուիլ ազգային երգին: Հազիւ աւարտած իր ուսումները՝ կը բազմաձայնէր երկսեռ երգչախումբի համար Կոմիտասեան ժողովրդական երգերը՝ տալով անոնց աւելի լայն ու խորունկ արտայայտութիւն ու երանգ: Այդ խմբերգներէն շատերը տպուած են նաեւ յետոյ սկաւառակներու վրայ:

Իր համանուագային արտագրութիւններուն մէջ դարձեալ երեւան կու գայ արեւելեան գոյնի սիրահար երաժշտագէտը, որ գիտէ գոհացնել արեւմտեան արուեստի կատարելութեան և նրբութեան բոլոր պահանջները, զնելով իր ստեղծագործութիւնները:

բուն մէջ արեւելեան հոգիի մը զգայնութիւնը և մտքի երեւակայութիւնը:

Այդպէս են իր Արեւելեան գիշերները, հեքիասը, և մանաւանդ իր Աշարայրի պատերազմը:

Գուրգէն Ալեմշահի մէջ բացի երգահանէն՝ նկատելու է նաեւ շատ ճարտար դեկորատիվ և խմբավար: Խմբերգային կազմակերպութիւններուն մէջ շատ զերարհազորդ, աշխոյժ և վճռական, իսկ իրրեւ նուագախումբի վարիչ՝ ան նշանաւոր էր իր արտայայտութեան ճշգրտութեամբը, իր մոգական մականին տակ կտորները կեանք կ'առնէին ստանալով իրենց հարազատ բնոյթը և երանգաւորումը:

Ժամանակը շատ ժլատ եղաւ իրեն հանդէպ: Այդպիսի պատրաստուած մտքէ մը ազգը կը սպասէր դեռ նորանոր գործերու:

Ու այդ օրը հեռու չէր. Ամերիկայէ դարձին, ոգեւորուած հոն գտած յաջողութենէն ու միանգամայն ընդունած իր հոգւոյն խորը՝ հոսանքը նոր ներշնչումներու, պիտի ձեռնարկէր անտարակոյս ինչպէս յայտնած էր իր մտերիմ բարեկամներուն, երաժշտական նոր արտադրութիւններուն: Գժրախտաբար այդ բախտը հունեցանք:

Հայ Սփիւռքի երաժշտական մարդին մէջ՝ իր կորուստը անփոխարինելի է, և սուգը որ խորապէս կը ճնշէ մեր վրայ, պիտի տեսէ ընդերկար: Մեր այս ծանր կորուստին առջեւ սակայն, լուռ ու համակամ, միշտ պիտի երազենք կարօտով Գուրգէն Ալեմշահը իր աղնիւ ու բարի ժպիտով, իր տաղանդին փայլով և իր հոգւոյն թանկագին ձերքերով, որոնք կը մնան անթառամ մեր սրտին մէջ՝ հակառակ աւերիչ ժամանակին:

Հ. Մ. Ճ.

ՈՂԲԵՐԳ ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հոս կու տանք Գուրգէն Ալեմշահի և իր եղբոր Խաչիկի՝ երբեմնի իրենց Ուսուցիչ Պր. Քիւրքճեանի (Բերայի Մխիթարեանց Սազը Աղաճի վարժարանին մէջ) սիրուն ողբերգը, գրուած իր աշակերտին մահուան անակնկալ լուրին առթիւ:

Կատակդ հերիք, բաց աչերըդ իմ որդի
Կատակդ հերիք, ելիր ոտքի իմ որդի.
Հերիք, զսպեա ժըպիտդ անմեղ, տես, կու լամ,
Խօսէ, խնդա՛ որ մահուանըդ չըհաւտամ:

Բնդոտս ելաւ և կանգնեցաւ ժպտագին,
Հսկայ վարդ մ'էր՝ թէ՛ մարմինն իր, թէ՛ հոգին.
Լըցաւ երկինք անոյշ հոտով քաղցրաբոյր
Ան՝ բոլորին կու տար հեղիկ, մեղմ համբոյր:

Խօսէ՛ ինծի, գոնէ ինծի և գաղտնի
Զաւակս անդին, ձայնըդ լրանմ երբեմնի...
Վարդէն համեստ, վարդէն աղուոր իմ որդի,
Գեղեցկութեանդ անգիտակից կոյս հոգի:

Վերըսկըսաւ երազներու կեանքը նոր,
Յուզիչ հրճուանք, երգ ու աղօթք ամէն օր.
Լըռիկ, անդորր խաղաղութեան աշխարհէն էր
Վարդին խորէն Գուրգէնը գոհ կը նայէր:

Նորածինի պէս անմեղ ես, իմ տըղաս,
Ես քու հետդ եմ, և դուն ինձ հետ, պէտք չէ լսա.
Աստղ մ'էիր, այժմ վարդ մը կ'երեւաս.
Բարի հոգի, արի հոգի, լոյս դառնաս:

27 դեկտ. 1947.

Ք. Ա.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԷՋ ՄԸ

(ՊԱՏՄՈՒԱԾՔ)

Ա.

Որբ էր Սեդրակ: Բայց իրական որբերէն: Չէր յիշեր ոչ իր մայրը, ոչ իր հայրը: Չէր գիտեր նաեւ թէ քոյր մը, կամ եղբայր մը, կամ աղ-դական մը ունեցած ըլլար, ո՞նէ մէկ ատեն, աշխարհի ո՞նէ մէկ անկիւնը: Զինքը հաւաքած էին՝ շատ փոքրիկ հասակէն ու իրեն անուն մը տուած: Շունի մը նման:

Սեդրակ գիտէր միայն թէ կատարեալ որբ մըն էր: Ասիկա շատ լաւ գիտէր, որովհետեւ շատ յաճախ զգացած էր մորթին վրայ, ձեռքերուն վրայ, սրտին և ճակատին վրայ:

Գիտէր նաեւ թէ հայ էր: Որովհետեւ հայ ձեռք մը զինքը հաւաքած էր մանուկ եղած ատենը, և անունն ալ հայկական էր: Իր երակներուն արիւնն ալ այդ կ'ապացուցանէր, առանց շատ աղէկ ըմբռնելու:

Թէ՛ երբ հայու մը խանութը մտաւ աշխատելու, մօտաւորապէս քսան տարեկան մը ըլլալու էր: Թէ՛ ասդին անդին քանի մը լեզու խօսիլ սորված էր, բայց չունէր ուսում: Թէ՛ ապրելու համար հաց, հագուստ և բնակարան պէտք են ու ասոնք դրամով կը գնուին:

Շատ որբեր կային 1915-ի վայրագութեանց հետեւանքով: Սեդրակ այս թուականին փաստերէն էր:

Շատ որբեր կային: Մեր գիտցածէն աւելի: Եւ ամէն որբ պատմութիւն մըն էր: Մեր պատմութիւնը: Եւ մեր պատմութեան վկայութիւնը:

Սեդրակ անոնցմէ էր երբ մտաւ հայ խանութպանի մը մօտ:

Ինքն ալ կը զարմանար թէ ինչպէս զինքը մինչեւ Աղեքսանդրիա կրցած էին բերել: Հայ որբ մը կարելի էր աղատել: Եւ սակայն եկած էր, հոն էր, կը շնչէր, ապրելու տրամադրութիւն ունէր, և ոչ թէ աշխարհը՝ այլ մարդ մը անգամ չէր ճանչնար, ու կենդանի նախատինքն էր այս աշխարհի: Եւ ամէնէն լայն նախատինքն էր իր խանութին առաջ կանգնած էր Սեդրակ, բայց չէր համարձակեր ներս մտնելու: Կը վախնար ինք. և իրմէ կը վախնային: Ունէր կօշիկներ

պատուած ու առանց խրացի: Ունէր հագուստ մը որ իր մորթը ցոյց կու տար տեղ տեղ:

Մարդը ըսաւ.

— Հոգ չէ ներս անցիր:

Եւ ներս անցաւ որբը: Հայ որբը լոյս առաւ հայ խանութէն ներս:

Տրուեցաւ իրեն հագուստ մը որ նոր չէր, բայց իրենինն հետ չէր բաղդատուեր: Մարդու երեւոյթ առաւ իսկոյն: Ոյժ ալ առաւ:

Քիչ մը ամէն գործ ըրաւ հոն. երիտասարդ էր, խելք ունէր, լեզուներ կը խօսէր: Ատեն մը յետոյ քիչ մըն ալ դրամ ունեցաւ. ծխախոտ անգամ գնեց:

Հայ խանութպանը վաճառականի մը պէս նայեցաւ հայ որբին: Չար չեղաւ հետը: Գործ պահանջեց: Վարձատրեց զայն: Զեղչ մը՝ այս վարձատրութենէն, շահ նկատեց:

Օրին մէկը Սեդրակ փախաւ: Պատճառը հարցուցի: Հայ խանութպանը պատասխանեց.

— Վերջերս ծուլացած էր:

Խնդրանքիս վրայ, Սեդրակ ետ կանչուեցաւ: Իր գործէն գոհ չէր. հայ խանութպանն ալ իրմէ: Սեդրակ հոն կ'աշխատէր, որովհետեւ ուրիշ գործ չունէր. խանութպանն ալ զինքը չէր վնասեր, որովհետեւ հայ որբ մըն էր ան:

Շատ էին հայ որբերը. ամէն հայ անոնց վրայ կը խղճար: Եթէ արտասահմանի մէջ հայկական պետութիւն մը ունենայինք, այս պետութիւնն ալ իր կարգին պիտի ունենար որբերու նախա-րարութիւն մը: Ուրեմն մեր որբերը չունեցան նախարար մը, բայց ունեցան պաշտպան խա-նութպաններ:

Սեդրակ ինծմէ կ'ամչնար. գործի կը ըծուէր: Խանութպանն ալ ինծմէ կ'ամչնար, ու զայն գործի կ'առնէր: Հայ որբը գնաց ու վերագար-ձաւ այս խանութը քանի մը անգամ: Իր տա-րեքը կը յառաջանար, բայց ոչ իր կացու-թիւնը: Ուսում չունէր, բայց կը հասկնար ասիկա: Մեղմադճոտ տղայ չէր. և սակայն օր մըն ալ այլ եւս այս խանութը չտեսայ զինքը:

Բ.

Երկու տարի յետոյ իրեն հանգիստացայ ծա-նօթի մը գրասենեակին մէջ:

Շուտեցաւ զիս տեսնելով: Շատ տակն ու վրայ եղաւ, և սուրճի ափսէն ամբողջովին վար ինկաւ իր ձեռքերէն, բոլոր գաւաթ-ինք. և իրմէ կը վախնային: Ունէր կօշիկներ